

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՊՁԵ

ՏՆՕՐԷՆ

ՏՕԲՐ. Յ. Ս. ՓԱՓԱՋԻԱՆ

(Ա. ՏԱՐԻ)

15 ՄԱՅԻՍ 1900

(ԹԻԻ 5)

ՊՁԵ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փամանակակից ոգին հայաբան, Երուանդ Սրմաբէշխանլեան. — Օրուան ճգաւորութիւններ, Կրօն Միջոցէլեան. — Գիտական արձագանգ (Լուսնի շրջան), Յ. Ս. Փափաճեան. — Ինչու չեմ ես . . . (Գրքի մասին). Տիգրան Սահեան. — Յովհաննէս Այվազովսի, Ե. Սրմաբէշխանլեան. — Մարգոն, Ա. Գալս. — Կիսամանակ:

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Չ Ա Ի Ի Ղ

Կը հրատարակուի մսէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր. , վեցամսեայ 5 ֆրանք :
Արասահմանի » տարեկան 12 ֆր. , վեցամսեայ 6 ֆրանք :
Ամերիկայի » » 2 1/2 առլար

“ՇԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Առաջին քիւր ստացող եւ ետ չդարձնողը բաժանուող
կը նկատուի :

Բաժնեգին եւ դրամ ղրկել ՄԻՍՅՆ հեռուեալ հասցէին

D^r H. S. PAPAZIAN

VARNA

Իսկ նամակ , յօդուած եւ թերթ ղրկել հեռուեալ հասցէին :

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

Varna

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԳԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

15 ՄԱՅԻՍ 1900

Թիւ 5

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՈՊԻՆ

ՀԱՅՈՒԹԵԱՆ

Վենետիկի Բազմալէսյ հանդէսէն յետոյ, արտասահմանի հայ մամուլին երկցադոյն ներկայացուցիչը Արմենիա՝ իր ապրիլ 18ի համարով կը յայտարարէ որ այլ ևս կը դադարեցնէ իր հրատարակութիւնը նիւթական ձախողուածի հետեւանօք, ու քանի մը ամիս ետքը այն պայմանով միայն պիտի վերերեւի լրագրական հրատարակին վրայ՝ երբ կանխիկ վճարող 600 բաժանորդ գտնայ:

Թերևս կարելի ըլլայ թերթին խափանման համար մէջ բերուած պատճառին վրայ չերկմտիլ, երբ արդէն յայտնի ճշմարտութիւն մըն է որ մտանաւորապէս արտասահմանի մէջ ի՛նչ աստիճան տաժանելի պայմաններով երեւան կելլեն թերթերը առ հատարակ:

Սակայն միւս կողմանէ անկարելի է ինքնին Հարցնել թէ տասնը

հինգ տարուան կեանք ունեցող թերթ մը ի՛նչպէս կտախուրի անհետանալ ասպարէզէ մը ուր «այսչափ տարիներէ ի վեր չորաչար կերպով ժամանակ, սիրտ ու միտք հատուցած է», մինչ անդ ինչ, դեռ երէկ ծնած թերթեր անխափան կը շարունակեն իրենց հրատարակութիւնը՝ միեւնոյն միջավայրին պայմաններուն տակ, և այն միեւնոյն ընթերցող հասարակութեան մէջ զոր կը ներկայացնէ արտասահմանի հայութիւնը:

Գերազանցապէս վատթարացած պէտք է ըլլայ ժողովուրդ մը որ՝ տարիներով իրեն մտքի ու սրտի սնունդ պարգեւող թերթ մը լքեցաներու տխուր ապուշութիւնը դորձէ. ժողովուրդի այս տեսակ կոշտ զանգուածի մը բարեշրման վրայ ալ յոյս զնելը ոչ նուազ միւս միտ ապուշութիւն մը կըլլար:

Բայց հայութիւնը բարոյական այս անկումին մէջ կը գտնուի՞ իսկապէս. իրուցնէ ի՛նչ է պատճառը որ թերթ մը կը խափանուի այսօր, մամուլին մէջ դիտուած այս վշտա-

ութ անգատութեան մեղքը ուրուն ճիտն է :

Այս հարցումներուն պատասխանը ուղղակի երթալ փնտռելու է այն սգիին մէջ իսկ որով գրեթէ ամբողջ հայութիւնը այսօր սողորուած կը գտնուի տելի կամ նուազ զօրաւոր կերպով :

Ու այդ սգին յեղափոխութեան սգին է :

* * *

Հայ հասարակութիւնը , իր ամբողջութեան ստուարագոյն մասին մէջ , հեռու է վատթարացած ըլլալէ . անոր փտած նեխած մասերը քչիկ քչիկ կը թափին կը կորստին . և օր մը ամբողջութիւնը երեւան պիտի դայ մնալուր , կայտառ առողջութեամբ մը : Հետեւապէս՝ թերթ մը խափանուելու արևսուր պորագային մէջ , մեր հասարակութեան պատասխանատուութիւնը որքան թեթեւ խափանուող թերթիւնը ա՛յնքան ծանր է :

Եւ ասոր կենդանի օրինակը այսօրնուս առջեւն է , Արմէնիան , որ ժամանակի տեսողութեան մէջ , անզգալի ընկրկումով , կը կրէ հակահարուածը իր հակասական ուղղութեան ուր ինկած էր ինքը իր 15 տարուան գոյութեան միջոցին :

Իսկզբան յեղափոխութեան վսեմ գաղափարին փողարը հանդիսանալ , նորազարթ գգացման մը հոսանքին թափ տալ այնքան սգեւորող հը-

րայրքով մը , ազատութեան անձնուէր զինուորի մը խրոխա ու գեղեցիկ շարժումովը ամբողջ ժողովըրդեան մը ցոյց տալ հեռուն վառուող փողոսն ջահ մը որ իր ճառագայթներուն տակ երանաէտօրէն պիտի ջերմացնէ ազգի մը շարչարանքէ ընդ արմնացած ու սուռած անդամները , և այսասպետական վազքին մէջ յանկարծ կանգ տանել , ու ետ դառնալ՝ վիրաւոր շիկերէի մը կառաղութեամբը , յարձակելու համար այն հոսանքին դէմ իսկ զըր ինք ստեղծած էր և որ սակայն ա՛լ չի կենար՝ այդ անազընկալ ընդգիմութիւնն ալ տապալելով անցնելով :

Արմէնիա , նախ գերազանցապէս յեղափոխական թերթ , յետոյ դարձաւ եզաւ հակայեղափոխական օտկան մը , խեղայեղօրէն յարձակելով յեղափոխական կազմակերպութիւններուն վրայ , ջանալով վարկաբեկ ընել զանոնք ազգին առջեւ , առյուէտ կորսուած ժողովրդականութիւն մը վաստակելու և անդարձօրէն քրքրուած դափնիներ ձեռք անցընելու անմիտ ու վնասակար երազանքով :

Բայց զուր ջանք . գետինը այլ ևս նպաստաւոր չէր այսօրինակ ձեռնարկի մը յաջողութեանը համար : Ազգին մեծամասնութիւնը համագուած էր թէ իր փրկութեան միակ ճանապարհը յեղափոխութիւնն է . և երբոր ազգ մը հա-

ւատք մը կը գոյացնէ իր գոյութեան հետ սերտ առնչութիւն ու նեցող պայմաններու մասին, անդրդուելի յամառութեամբ կառչած կը մնայ անոր բնազդաբար. այդ հաւատաքը արմատախիլ ընելու համար թափուած ամէն ճիգ ապարգիւն կը մնայ: Արմէնիա յեղափոխական կազմակերպութիւնները և անոնց գործունէութեան եղանակը ասիկա կերպով հարուածելով՝ յեղափոխութիւնը հարուածած եղաւ. ժողովուրդը, իր սուրբ համազման մէջ վիրաւորուած, ետ դարձուց հարուածը ու եկած սեղին հասցուց:

Արմէնիա ինկաւ, որովհետեւ անդիտակից գոնուեցաւ ասեղ զրութեանը այն սգիւն որուն ինքն իսկ սանձողներէն մէկը եղած էր ազգին մէջ և որուն հետ չկրցաւ վարուիլ շրջահայկաց ու հոգածու փափկութեամբը:

Ու բոլոր նմանօրինակ փորձեր՝ անխորհուրդ, կոյր և յիմար միջոցներով ի գործ դրուած, նենգաժէտ նպատակներու, մթին խորհուրդներու իրագործման սահմանուած, պիտի բախին միեւնոյն անգիւմազրելի ուժին և, ոչ կամ կանուխ, պիտի փշրուին այն միեւնոյն ճշակրատը քայքայումովը որով ալիքը կը փշրուի ապառաժին յաղթկուրժքին վրայ:

Յեռանգ Սեմաէլեխանիւսան

ՕՐՈՒԱՆ ՏՊԱՌՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վառնա, 13 Մայիս 1900

Պօլսոյ հասնու օրաթերթի մը ուսանայ թղթակիցը՝ արեւմտեան հայոց գրականութեան վրայ անցողակի տեսութիւն մը ընելու առթիւ՝ ուսանայու իր անժխտելի իրաւունքն ի գործ դնելով, գիտել կուտար որ մեր գրականութիւնը ընդհանրապէս զեղեցիկահիւս պարբերութեանց, ճանճրացուցիչ ճոռոմաբանութիւններու, ախրու և ուտերու հաւաքածոյ մըն է, զուրկ կենսական առողջ գաղափարներու արտայայտութենէ:

Որքան ալ քիչ փայփայիչ ըլլայ մեր գրագէտներուն համար՝ յարգելի թղթակիցին այս եզրակացութիւնը — որուն յանգած են մեր գրականութիւնը ուսումնասիրող գրեթէ բոլոր ուսանայ գրիչները — պէտք է քաջաբար խոստովանիլ որ անիկա՝ իր գլխաւոր գծերուն մէջ՝ անհրքելի ճշմարտութիւններ կը պարունակէ դժբաղդաբար: Արդարութիւն չպիտի ըլլար, սակայն, մեր գրականութեան այս վիճակին համար պատասխանատու նկատել մի միայն մեր գրողները, որոնք վերջապէս թրքահայ հասարակութեան զաւակներն են, ու իբր այն՝ իրենց վրայ կը կրեն ցեղին այդ հատուածին թերութիւններն ու առաւելութիւնները, որոնք ա՛լ աւելի չեղտուած են՝ երկնքի և ծովու կապոյտին, տերեւներու սօսափիւնին, լուսնին և արեւուն, և յուսահատ ու լալկան ձիւղերու նուիրուած ձեւապաշտ գրականութեան մը ուսումնասիրութեամբը լոկ:

Իրաւ է որ մեր արդի գրողներու մեծ մասը լուրջ փորձեր կընէ, ինչպէս ուստահայ թղթակիցը ինքն ալ կը խոստովանի, այդ թմբեցնող ու վտանգաւոր ուղղութենէն շեղելու համար, բայց հասարակութիւնը դատապարտելի յամառութեամբ փարած կը մնայ իր սիրական թերութեանց գոնէ ամենէն գլխաւորներուն, որոնք, դժբաղդաբար, ահագին անջրպետ մը բացած են ու նկարագրի հիմնական, որոշ զանազանութիւն մը գրած՝ միեւնոյն ազգին երկու գլխաւոր հատուածներուն, Արեւելեան եւ Արեւմտեան Հայոց միջեւ:

Անուբանալի ճշմարտութիւն մըն է որ ինչպէս մեր գրականութեան՝ նըմանապէս մեր ճատերուն, վիճաբանութեանց ու խօսակցութիւններուն ու մինչեւ իսկ մեր բարեկամական յարաբերութեանց, արդուզարդին մէջ ձեւն է որ տիրական հանդամանք մը ունի: Երնող, կազուրող, կենսական տարրը, գաղափարը, կը պակսի շատ անգամ մեր գրականութեան մէջ, ու երբեք չենք կրցած գնել սիրտ ու հոգի մեր յարաբերութեանց, ու ճաշակ՝ մեր արդուզարդին մէջ. ամէն բան զոհած ենք ձեւին, ու ձեւակերպութիւններու մէջ խեղճած՝ մեր ցեղային գոհար յատկութիւնները, մեր ուժեղ ու ինքնուրոյն նկարագիրն ու մեր վայելուչ ու պատկառելի պարզութիւնը:

Արտաքին, պատրող հրապոյրը ամէն բան է Արեւմուտքի հայուն համար: Իր ատելութիւններն ու համակրութիւնները վայրկեանական տպաւորութիւններու արդիւնքն են, առանց դատողութեան եւ առանց պատճառաբանութեան, հետեւաբար եւ խախտու ու անկայուն: Մեր երիտասարդներէն

չատերը Նւրոպա կերթան ու կը կարծեն քաղաքակրթուած ըլլալ, որովհետեւ գերազանց յաջողութեամբ կըրցած են ընդօրինակել քանի մը միմասական, հոպիտի շարժումներ եւ ծամծրմալ քանի մը փափուկ եւ ուռուցիկ բացատրութիւններ. մեր գաւառացիները կը կարծեն նրբացած ըլլալ՝ որովհետեւ եւրոպական տարագով ըսկըսած են հագուել. մեր կիներն ու աղջիկները զարգացած կը նկատուին երբ գլխարկ ու ձեռնոց կը գործածեն, համարձակ կը խօսին, ու կը կարդան առանց հասկնալու:

Ձեւը, արտաքին հրապոյրներն են որ կ'ուղղեն մեր ամէն շարժումները, գնահատել կուտան մեր արժանիքը եւ կը վճռեն մեր բաղձը: Ենցումներու, արտակարգ ցնցումներու պէտք ունինք բարեգործութիւններ ընելու կամ եղածները գնահատել կարենալու համար. վերջապէս մեր ամբողջ կեանքը, մեր բովանդակ գործունէութիւնը ձեւակերպութիւններու շուրջը կը դառնայ, կեղծիքներով լեցուն, անհամ ու տափակ չպարուններով տըզեղցած:

Անոնք, Արեւելքի հայերը, ձեւերու սիրահար չեն, իրենց գրականութիւնը, իրենց բարքերը, խօսակցութիւնը, արդուզարդը անարուեստ են, նոյն իսկ կոչտութեան կը մօտենան, եթէ կուզէք. եւ իրենց ատելութիւններն ու համակրութիւնները որոշ ու հաստատ կուտան յիշատակը ուսած են. գաղափարի եւ սկզբունքի տէր մարդիկ՝ որոնք հարազատօրէն կը ցոլացնեն իրենց վրայ մեր ցեղային նկարագրին մէկէ աւելի օրինակելի կողմերը: Բարեգործութիւնը, ու մանաւանդ առատաձեռն բարեգործութիւնը, իրենց կեանքի սովորա-

կան երևույթներէն մէկն է, ու իրենց բոլոր գործերուն սէս ան ալ սխիթեմաթիք վիճակ մը առած է:

Ուրիշ առաւելութիւն մըն ալ ունին անոնք, աւելի ջախջախիչ, աւելի աչքի զարնող, այն է համերաշխութեան ոգին, զոր ցոյց կուտան՝ դոնէ օտարին հանդէպ՝ իրենց փոխազարձ՝ յարաբերութեանցը մէջ: Մեր բոլոր թերութիւնները ապահովապէս պիտի դադրէին վտանգաւոր դառնալէ՝ եթէ երբեք գէթ համերաշխ տարր մը ըլլալու առաքինութիւնը ունենայինք: Եւ ըսե՛լ որ այս ուղղութեամբ եղած ամէն ջանքեր վիժած են յուսահատեցուցիչ կանոնաւորութեամբ:

*
* *

Համերաշխութեան գաղափարը արտասահմանի հայութեան մէջ տարածելու գլխաւոր նպատակաւ էր որ Վառնայի մէջ քանի մը գործնական ոգիի տէր անձնաւորութիւններ, գիշեր ցերեկ աշխատելով, պատրաստեցին նախնական ծրագիրը «հայ ազգային տնտեսական ընկերութիւն» անունով գիւսի առեւտրական կազմակերպութեան մը, որ կը մնայ նախնական ծրագրի նախնական վիճակին մէջ, մեր գրասեղաններու փոշիներուն տակ ծածկուած:

Համերաշխ գործակցութեան ի՛նչ անապառ աղբիւրներ կը պարունակէր այդ ծրագիրը, որուն գործադրութիւնը հաւասար գոհացում մը պիտի տար շահախնդիր գրամատիրոջ, իր ապագան ապահովել ուզող քաղքենիին, իր հացը մուրացող անանկին ու ազգային վերածնութեան գատին համար իր կեանքը առողջ անկեղծ յեղափոխականին:

Հազիւ քանի մը հոգի միայն հետաքրքրուեցան այդ ծրագրով, իսկ մեծամասնութիւնը անոնց՝ որոնց դրուած էին այդ տպուած ծրագիրները՝ ապահովարար ոչ իսկ զանոնք կարգալու ձանձրութիւնը յանձն առաւ, անշուշտ սա գլխաւոր պատճառաւ որ այդ ձեռնարկին նշանաբանին մէջ փոխադարձ աջակցութիւն բառերը կը գտնուէին, ու ամէնքս ալ գիտենք որ փոխադարձ աջակցութիւն կը նշանակէ համերաշխութիւն ու համերաշխութիւն բառն ալ հայերէն չէ, խորթ է եւ օտարամուտ. հետեւաբար, իրբեւ նախանձախնդիր մեր լեզուի մաքրութեան, պէտք չէ ընդունիլ ոչ բառը, ոչ ալ անոր ներչնչած գաղափարը(6):

Ուրիշներ՝ ըմբռնելով հանդերձ ձեռնարկին օգտակարութիւնն ու կարեւորութիւնը՝ անտարբեր մնացին եւ չուզեցին ուր է կերպով աջակցիլ նպատակին իրագործման, որովհետեւ գաղափարը յղացած եւ զայն հասարակութեան ներկայացուցած ըլլալու պատիւը ուրիշին կը պատկանէր:

Կը հաւատամ, սիրելի ընթերցող, բացարձակապէս կը հաւատամ որ այսքան ճշմամբ փառասիրութիւններով օժտուած հասարակութիւն մը անկարող ըլլայ գիտակցաբար ըմբռնելու համերաշխութեան ոգին:

Գործունէութիւնը կապտող ու ջրլատող, մեր գոյութիւնը թունաւորող ու մահացնող այս ախտը անուշի աւերումներ գործած է մեր մէջ: Եկամուտ թերութիւն մը չէ ան, ո՛չ ալ պատահական չարիք մը, այլ քանի մը հազար տարուան ժառանգութիւն՝ զոր վայելելով յափրացած ենք եւ որովհէ՛ հակառակ մեր շուայ մխուսներուն՝ անագին մթերք մը կը մնայ տակաւին մեր քով տրամադրելի: Հա-

ւաքական գերագոյն ճիգ մը, ու այդ աղետալի զանգուածը մէկ հարուածով պիտի խորտակուի, փշրուի ու մշնք փրկուած պիտի ըլլանք, միանգամ ընդ միշտ, չարաշուք ժառանգութեանէ մը, որ մեր հայրենի օճախը քանգեց ու մեզ մոխիրի վրայ նստեցուց:

Ազգային երախտագիտութեան արժանի գործ մը կատարած պիտի ըլլայ անշուշտ այն անձը կամ մարմինը որ հարկ եղած կորովն ու յարատեւութիւնը պիտի ունենայ համերաշխութեան դաղափարը տարածելու, եւ անոր պէտքն ու անդիմադրելի ուժը զգացնելու արտասահմանի մէջ ցրուած ամբողջ հայութեան:

*
* *

Այս ուղղութեամբ՝ յուսադրող ու սրտապնդող գեղեցիկ օրինակ մը կուտայ մեզ Նիւ-Եօրքի հայութիւնը, որ ձեռնարկած է վերակազմելու « 1888ին հիմնուած եւ մերթ ընդ մերթ կանդ առած, իսկ 1895 էն ի վեր լուծուած Ամերիկայի Խայկական միութիւն »-ը՝ որուն գլխաւոր նպատակը պիտի ըլլայ « իր անդամներուն մէջ վառ պահել ընկերական խանդը եւ ազգային ոգին »:

Հայկական միութիւնը իր ճիւղերը պիտի ունենայ ամբողջ Ամերիկայի հայաբնակ քաղաքներուն մէջ, հետեւեալաբար եւ առիթն ու դիւրութիւնը պիտի ունենայ ցոյց տալու, ընդարձակ սահմանի մը մէջ, համերաշխ գործակցութեան անհուն բարեքները: Անդամ մը որ ժողովուրդի զանգուածը ըմբռնէ, զգայ ու շօշափելի կերպով տեսնէ այս կենսաբաշխ ուղղութեան բարերար արդիւնքները, ու համոզմամբ ընդգրկէ այդ ուղղութիւ-

նը, անով սկսի առաջնորդուիլ իր մէն գործերուն, իր կեանքի զանազան ելեւէջներուն մէջ, այն ատեն միայն ազգային վերածնութեան գործը հաստատ եւ ամուր կուտանի մը վրայ դրուած կրնանք նկատել, ու գիմնել մեր ապագան՝ անխռով ու անվհատ՝ որքան ալ ծանր ու յուսահատեցուցիչ ըլլան կեանքի պայմանները՝ որոնց ներքեւ դատապարտուած ենք ապրելու հիմա:

Ուժեղ ձեռքերով ու հաստատ կամեցողութեամբ վարուած այս տեսակ մարմին մը ապահովապէս պիտի կրնայ, համերաշխութեան դաղափարի տարածման եւ ազգայնութեան ոգին վառ պահելու կրկին տեսակէտներով, հրաշքներ գործել Ամերիկայի պէս երկրի մը մէջ, ուր զանազան անուրակելի կիրքեր տարօրինակ ուժգնութեամբ սկսած են ծլլիլ ու ծաղկիլ, ընդհուպ արմատ բռնելու համար այդ կոյս հողին մէջ ալ, եւ ուր՝ վերջապէս՝ միջազգային հսկայ հալոցը կայ, իր անդիմադրելի հրապոյրներով, որուն մէջ կրնան անմտօրէն նետուիլ մեքիներէն շատերը՝ ձուլուելու եւ անհետանալու համար:

1888-1895 ընդմիջաբար շարունակուած եւ 1895 էն ի վեր լուծուած այս « Հայկական միութիւն »-ը երբ Նիւ-Եօրքի հայերը կը վերակենդանացնեն գեղեցիկ թափով մը, հաճելի եւ մխիթարիչ անակնկալ մը տալով մեզի, կարելի չէ՞ արդեօք որ՝ Վառնայի « Հայ ազգային տնտեսական միութեան » ծրագրական մասնախումբը, ազդուած այս քաջալերիչ օրինակէն, ինքն ալ վերստին ձեռք առնէ 1897ին անհետեւանք մնացած իր նախնական ծրագիրը՝ որուն մէջ յաջողուելու հաւանականութիւնները այնքան աւելի

չատցած են որքան զգալի եղած ու շեշտուած է, անկէ ի վեր, համերաշխութեան պէտքը:

Շուրջի խմբագրութիւնը ինքզինքը մասնախմբին տրամադրութեան ներքեւ կը դնէ ամէն կերպով աջակցելու համար այս գաղափարին իրագործման, խորապէս համոզուած ըլլալով որ այդ իրագործումը հսկայ քայլ մըն է՝ ազգային վերածնութեան գծուարին գործին մէջ առնուած:

ԿՐՕՆ ՄԻՔՍՅԵԼԵԱՆ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՎԱՂՈՒԱՆ ԴԵՂԵՐԸ

Սիրուած երգի մը յանկերգին նման աշխարհիս մէկ ծայրէն միւսը ամէն վայրկեան կը կրկնուի թէ « մարդկութիւնը կը յառաջդիմէ »:

Բացարձակ ճշմարտութիւն մը համարուած է ասիկա, մանաւանդ որ պարբերաբար կաղմակերպուած յուցահանդէսներ լիովին կապացուցանեն սմբովին սրտէն ու համոզումէն բրդած այս ազազակը, բայց . . . :

Սմէն պայմանաւոր քայց միշտ գառն եղած է:

Որքան որ ալ հաճելի ըլլայ ճշմարտութիւն մը միշտ անփոփոխ կրկնելը, նոյնքան ցաւալի է ըսել թէ ամէն ատեն իրաւացի չէ ան, ինչպէս, օրինակի համար « մարդկութիւնը կը յառաջդիմէ » ին մէջ

կայ սա անհերքելի իրողութիւնը թէ մարդիկ կը խաբուին և կը խաբեն ինքզինքնին:

Իսկապէս մարդկութիւնը չէ որ կը յառաջդիմէ, այլ գիտութիւնները, արուեստներն են որ առաջ կերթան. մարդիկ կը յետադիմեն և մոռնաւանդ ամենէն կարեւոր բանին՝ առաջնութեան եւ երկարակեցութեան մէջ:

Օր չըլլար որ բժիշկները իրենց տեղեկագիրներուն մէջ լայն տեղ մը չտան սա համոզումին թէ մարդուն կեանքի տեսողութիւնը հեռազնեաէ պակսելու վրայ է և սասոր պատճառը քաղաքակրթութիւնն է:

Սպրեւը դէշ եղանակը, անկաշուն մեռնողը և ընկերականութեան պահանջումները ոյնքան խորունկ կերպով ազդած են մեր ներքին կեանքին վրայ որ անտեղի չէ ըսելը թէ դէպ ի կորուստ կը դիմենը:

Օր մը երբ յառաջդիմութիւնը ա՛լ աւելի շեշտուի, մարդկային ցեղը սկարացած, բթացած պիտի ըլլայ և բաւական ուժ չպիտի ունենայ զայն վարելու և վայելելու համար:

Շատ տխուր մարդարէութիւն մըն է որ կըլլուի ատանկներորդ դարուն վախճանին և սակայն պէտք չէ վրդովիլ. բժիշկներէն ոմանք մեր օձիքը ձգած չեն, միշտ հետազօտութիւններու մէջ են և հիմակ ալ կը յայտարարեն թէ քիմիական

դեղերը շատ վնասաբեր են մարմնին :

Նորութիւն մը հողորդած ըլլալու միտումով չէ որ պիտի ըսեմ թէ շիճուկներու (serum) ներարկումի դրութիւնը մեծ ամեծ քայլեր կառնէ . Բասթօր դուցէ ամենէն խելացի մարդն էր որ բժշկութիւնը տարբեր կերպով ըմբռնեց և ուղեց նոր ու կարեւոր զարկ մը տալ անոր , շիճուկներ ստեղծելով որոնք այսօր հրաշալի արդիւնքներ կուտան :

Բայց Բասթօրի դիւար նոր բան մը չէր , հին դրութիւն մըն էր զոր վերականգանացուց . վասն զի 75 թուականին՝ Յոյները կենդանական գործարաններէ պատրաստուած դեղեր ունէին զոր կը գործածէին և գեռ կան տեղեր որ անոնց գործածութիւնը կը շարունակուի :

Պրուսն-Մէքար ալ Բասթօրի սկզբունքներուն հետեւեցաւ և հնդկական խոզէն (cobaye) պատրաստեց իր ուժատու շիճուկը , որուն համար շատ մը միամիտ ծերունիներ օրհնութիւն տեղացուցին անոր դիւտուն . . . հրասթափ ըլլալէ առաջ :

Գրութիւնը պարզ և շատ արամաբանական է . բժշկել հիւանդ գործարան մը՝ ուրիշ նմանօրինակ առողջ և զորաւոր գործարանի մը հիւթերովը և կամ անոր արտադրութիւններովը : Onganothérapie կը կոչուի այն , թէև Բարիդի նշա-

նաւոր բրօֆէսօրներէն Լանտուզի opothérapie կոչել կառավարկէ :

Փորձերը սկսած են արդէն տեղ տեղ և երբ օր մը ընդհանրանան անոնք և յաջողութիւն գտնեն , ա՛լ գիմիական նիւթերով լեցուած շիջեր չպիտի գտնենք դեղարաններուն մէջ . ընդհակառակը տեսակ տեսակ ուղեղի կատրուանքներ , սրբափ պատասաններ , լեարդի վշուրներ և մարմնոյ զանազան արտադրութիւններ , մէկ բառով՝ դեղարանները պիտի վերածուին սպանդանոցներու :

Ենթադրեցէք որ բարեկամ մը ունիք որ ուղեղի տկարութիւն կզգայ , բժշկը պիտի գայ , ոչխարի առողջ ըղեղ մը բ'րել պիտի տայ և անոր հիւթը առնելով պիտի ներարկէ ու . . . բարեկամնիք պիտի առողջանայ՝ եթէ ոչ զգաստանայ , կամ եթէ լեարդային հիւանդութիւն մը ունի՝ խոզի կամ գայլի լեարդ մը բաւական պիտի ըլլայ ըւսացումի (lavement) ձեւով գործածել և բըժշկուիլ :

Շարաբախտով առնջուղին պիտի յանձնարարուի ուտել հում մսոն (pancréas) և սպիտահասու թեան (albuminerie) ներարկել եզան երիկամունքին քամուած ջուրը :

Վագէզ անուն բժիշկ մը կրտէ թէ 1825 տարի առաջ յոյն բժիշկ Տիօքօմիտ կը յանձնարարէ եղեր որ ուրբ , ձեռքը դողդղացող մարդուն նապաստակի ուղեղ կերցնեն ,

անկից առաջ ալ ուրիշ մը լուսնոս-
ներուն միակ դեղը համարած է
ուղտի ուղեղը :

Կարձ շնչաութիւն ունեցող-
ները աղուէտի թոք ուտելու են կըս-
ուի և ընդհանուր առմամբ տկար
մարմին ունեցողները՝ շունի, էջի,
եղջերուի կամ բորենիի ծննդական
գործարանները :

17րորդ դարուն սկիզբները Փը-
րանսայի մէջ Հենրիկոս Դ-ի բժիշկը՝
Ֆան աը Բընու արքայական հրու-
վարտակով հարկադրեր է դեղա-
գործները իրենց քով ունենալ եղ-
ջերուի, շունի, արագիլի, սիրա-
մարգի, աղանձի և ուրիշ շատ մը
կենդանիներու կղկղանքները, որոնց
գործածութիւնը ընդհանրանալ ըս-
կըսեր է Ժողովուրդին մէջ :

1716 ին հրատարակուած դեղե-
րու գլխադի մը մէջ տեսնուած է
որ մարդու արտադրութիւնները,
ինչպէս լրձուճի, սկանջի աղան-
դութիւնը, կնոջ կաթը և մէզը ու
կղկղանքը իբրեւ դեղ կը գործածեն:

Ականջի աղանդութիւնը՝ զոր ce-
rumen կանուանեն, կլլուելով օգ-
տակար է եղեր խիթերու, իսկ
գորտէն գործածուելով կը բուժէ
եղեր վէրքեր և ձեռքի ու շրթուն-
քի ճեղքուածքներ :

Կնոջ կաթը օգտակար համար-
ուած է թոքախտաւորներու, կուրծ-
քի հարուխ ունեցողներու և նի-
հարութենէ սանջուողներու համար:

Լորձուճը օգտակար է աղայոց
առամնահանութեան միջոցին լին-
տերուն քսել: Կը գործածուին
նաեւ նապաստակի, եզի, խոզի
ծուծ և ուղեղ կամ ագաղաղի իւ-
ղը, նոյնպէս և անոր կտտարին ա-
րիւնը, միեւնոյն կերպով:

Մարդուն կղկղանքը ստամբուի
գժուարամարսութիւնները կը բու-
ժէ եղեր. դուրսէն գործածուելով՝
վէրքերու ցաւը կը մեղմացնէ, շար-
պօն (ածխախտ) ըսուած վտանգա-
ւոր պալարը կը հասունցնէ. սպե-
ղանիի ձեւով շատ ատը գործածու-
թիւնը կը բուժէ վնասակար խոյ-
թուածքները. իսկ չորցուելով վա-
շի վերածուելէ ու մեղրի խառնուե-
լէ յետոյ կոկորդի բորբոքումները
կանցընէ. նաեւ այրուելով և ուրիշ
դեղերու մէջ խառնուելով ներսէն
ալ կը գործածուի ջերմի, քաղցկե-
ղի և սաամոքսային ընդլայնումի
համար, օբսկան 6 կրամ չափով:


Միեւնոյն դեղը ժանտառնեղի
համար հրաշալի համարուած է,
եթէ առաւօտները անօթի փորանց
կաղինի մեծութեամբ կըլլուի. չի
գիտցուիր թէ այդքան ակարճահամ
դեղահասար մը համար սակեզօ-
ծելու գրութիւնը հա՞րկ է ընդունիլ:

Վերջապէս շատ հաճելի դեղեր
չեն որոնք կը յանձնարարուին այժ-
մէն իսկ, և օր մը, թէեւ ոչ մենք,
բայց մեր յաջորդները գժբաղդու-
թիւնը պիտի ունենան զանանք վա-
յելելու, միայն թէ սաամոքսներուն

ճաշակը փոխելու ալ դեղեր հնա-
 րելու են, վասն զի այս դարու մար-
 դոցմէ դասելով մենէ ետքը եկող-
 ները նախամեծար պիտի համարեն
 չարաչար տանջուիլ և մեռնիլ քան
 նոր բժշկութեան անսուլ :

Սակայն եթէ այս ամենքը շիճու-
 կի ձեռով ներկայացուի՞ն
 այն ասան մարդկային ցեղը վեր-
 կուած է, կրսէ վազէզ :

Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ



ԻՆՉՈՒ ԶԵՄ ԵՍ . . .

(ՎԱՐԳԻՆ)

Ինչո՞ւ չեմ ես զեփիւս ազա՛ս
 Օրրէի քեզ, ո՞վ կոյս վարդ,
 Փայփայանքներ սամ հարազատ
 Նուրբ կոկոնիդ թաւազարդ :

Ինչո՞ւ չեմ ես քրնարեգա՛կ
 Սոխակիդ պէս սիրահար,
 Նսած քուփիդ վրայ միմա՛կ
 Երգէի ե՛րգ սիրոյ, յար :

Ինչո՞ւ չեմ ես այն ժիւր մեղուն
 Որ հեալով թռէի,
 Քաղցր հիւքիդ սենչով զեղուն
 Թերթիդ վրայ թառէի :

Ինչո՞ւ չեմ ես կաթիլ մը ցօ՛ղ,

Ինկած բաժ՛կիդ յասակին,
 Որ քու բոյրիդ նե՛ս մխացո՞ղ
 Եոզիանամ դէպ երկին :

Ինչո՞ւ չեմ ես
 Ափ մը ճիւրք
 Գէթ վերջապէս
 Հողիդ սակ

Որ դու ծըծես
 Կեանքիս հիւքը
 Սիրող սրէս
 Յիշատակ :

ՏԻԳՐԱՆ ԱՃԵՄԵԱՆ



ՅՈՎՀԱՆՆԵՒՄ ԱՅՎԱԶՈՎՍԻԻ

Սուրբ ձեռքը ինկող անվեհեր
 զինուորի մը պէս կը թողու աշ-
 խարհը արուեստագիտութեան ա-
 մենէն հոյակապ դէմքերէն մէկը,
 Յովհաննէս Այվազովսքի, իր հզօր
 մատներուն մէջ դեռ սեղմած վրձինը,
 ուսկից բխած են ահարկու մոլեգ-
 նութիւնները ծովուն, անոր դի-
 ւային գալարումները, հսկայական
 տենդերն ու դահավիժումները, ու
 նաեւ անոր ամենէն զմայլեցուցիչ
 հանդարտութիւնը կապտադեղ :

Այդ մեծ հոգին որ ջրային զանգուածներու անհունութեանը մէջ իր փրփրոտ հանճարին յագեցման զովութիւնը կերթար փնտռել, որ տներկիւղ ու հաճոյաւէտ տեսլահանութեամբ մը անոր գալարաւաանջ մանչիւնները կ'ունկնդրէր ու անոր հեղիկ մեքանոշ երաժշտութիւնն ալ, հիմակ եթերին կապոյտ անտահմանութեանը մէջ կը սահի կերթայ ըսեղէն հուրի մը հանգարտ սաւառնածքովը :

Այլազովքիին հետ հայ ցեղի հանճարին ամենէն կորովի սրտալայտութիւնն է որ կը շիջանի : Մեր ազգին զժրտաւ ճակատագրին մթութեանը վրայ անիկա ջահ մին էր ջերմացող ու փողփողենէջ : Եւ կորուստը անոր համար ողբայի է մանաւանդ որովհետեւ այս տեսակ շքեղ անհատակութիւններ ջինջ ու լայնաբեր աչքեր են որոնցմով ազգ մը կը նայի աշխարհի : Յեղբիւր գոյութեան իրաւունքը մանաւանդ անոնցմով կունենայ. հարստահարուած ժողովուրդի մը գոգը սրբան շատ ուռճանան համայն մարդկութեան յորդանքն ու սքանչացումը վայելող հանճարներ, այդ ժողովուրդին բողբոխ ձայնը այնքան արականօրէն բարձր ու ազդու կը լլայ : Այլազովքիով, որ կ'անհետանայ, մենք խրոխտօրէն կրնանք պոռալ աշխարհի . « Ազգ մը որ Այլազովքիներ կորտագրէ, չի կրնար անհետանալ մարդկութեան տամարէն . ուրեմն մենք պիտի մնանք . . . » :

Ու կատաղութենէ ինչպէ՛ս չմտալ զերազանցապէս զայրացնող այն երեւոյթին առջեւ որով աշխարհի մամուլին կարեւոր մէկ մասը կանգիտանայ մտրող հանճարին հոյ մը ըլլալը . ուստի հանճար մը կը յայտարարուի ան որ հայ արեան ամենէն հարազատ ծնունդն էր : Ապուշ և ապէտ մամուլի մը դորձած այս սխալը՝ ազգի մը տարրական իրաւունքներուն վրայ կատարուած էն ըմբոստեցուցիչ յախըշտակութիւններէն մէկն է : Ու առաջին անգամը չէ որ հայութիւնը այս բարոյական աղէտին կենթարկուի : Այլազովքիէն աւաճ շատ հայ ազգանդներ, թէ՛ իրենց ուղջութեանը և թէ՛ մահուընէ ետք՝ նկատուած են զաւակը այն ազգին սրուն մատուցած էին անոնք իրենց արդիւնաւոր ու պանծալի ծառայութիւնները : Ճմարտաւ է որ հանճարները զերազանցապէս ընդհանուր մարդկութեան զուակներն են, բայց ի՞նչ պիտի ըսէր անգլիացին եթէ Շէքսպիրը Փրանսոցի հռչակէին, կամ բողբոխ ի՞նչ ահարկուողազակով մը աշխարհը պիտի լեցունէին Փրանսոցի ստ անապարծ ու իրենց ղթին ծայրէն սնդին շանտող հեղինակներն ու օրագրողները՝ եթէ Մոլիէրը բունի դերմանացի յայտարարուէր օտարներէն : Թղթատեցէք Փրանսական անսխիջօթէսիները, ու պիտի տեսնէք թէ ինչպէս համայնապէս ու խղճա-

միտ նկատուած հեղինակներ ամենէն ապուշ ապիտուութիւնն ունեցած են խեղաթիւրերու սաղանդի մը բուն ազդութիւնը, թէ ինչպէս մեր ցեղին ամենէն հսկայ տիպարները եղած են ո՛րը ուսս, ո՛րը բարձրագոյն, ո՛րը թուրք, ո՛րը եգիպտացի, եւ այլն :

*
*
*

Այվազովաքի թէև թէոզոսիոյ մէջ ծնած, իր նախնիքը, անցեալ դարուն, Հայաստանէն գաղթած էին կալիցիա, ուսկից Այվազովաքիի հայրը խրիմ փոխադրուած էր ընտանեկան անհամաձայնութիւններու հետեւանօր :

Խրիմի խարակալից ու ապուռա ժուռ այն ամուսնին ասարկու բաւ նաստեղծութեան հանդէպ, մշտականօրէն կոծող մանչացող ծովուն յուզումնալից համայնապատկերին առջեւ էր սր մանուկ Այվազովաքին ներշնչումի անսպաս հուրքովը լըցուեցաւ : Դեռ տասնամեայ, սկսաւ նկարել՝ նորընծիւղ հանձարին անգիտակից թերագրութեանը տակ : Ապագայ հրաշակերտներու այդ կտոր բրդուճ նախատիպարները այնքան արդէն ուշագրութիւն կը գրաւեն սր Յովհաննէս հազիւ տասնըհինգ տարու կը մտնէ Բեդերսպուրի գեղարուեստական սկազեմիան, ուր արշաւակի կը յառաջդիմէ : 1839 ին առաջին կարգի նկարիչ տիպոսով կը թողու ակա-

դեմին, ու կը նետուի փառքի աղմուկալից ուղին :

1842 ին կսկսի իր գեղարուեստական պայտնեբուն Եւրոպայի զանազան կողմերը՝ իր հրաշակերտած արիքներուն ասեղ քերթուածին գիւթութեանը վրայ հիացման բացագոնչութիւններ խելելով, վայելելով ամենէն մեծ պատիւները զորս արուեստագէտ մը իրաւունք ունենայ ընդունելու զնահատող ու գեղարուեստատէր հասարակութեան մը ինչպէս է Բարիզինը, ուր իր պատկերներուն գառած յաջողութիւնը ամէն սկնկալութեանէ վեր եղած է : Ռուսիա դարձին, ուր զինքը կանխած էր իր համբաւը այնքան կարճ ժամանակուան մէջ, մեծամեծ վարձատրութեանց կարժանանայ Նիքոլա Ա. Զարէն : Ուսուցիչ կը կարգուի Բեդերսպուրիի գեղարուեստական սկազեմիին : 1854 ի պատերազմին նորէն Բարիզ կանցնի, ուր ուսս զեռագոնը զինքը կը ներկայացնէ Նաբոլէոն Գ. ի : Աստեղմէ զտա 1855 ի և 78 ի Բարիզի ցուցահանդէսներուն կը հանտեսէ իր նկարները, սրոնք շքեղ գընահատութիւններու կ'արժանանան : 75 ին Պոլիս այցելելով վոսփորի սրանչելի տեսարանները կտաւ ի վրայ կը կենդանայնէ ու պատուանշաններով կը վարձատրուի :

Վերջին անգամ 1890 ին նորէն Բարիզ կերթայ մասնաւոր հրաւերով՝ Սալօնին մէջ ցուցագրելու իր

էն դիւթական հրաշակերտները , որոնք ընդամենը 28 կտոր էին : Այդ միեւնոյն թուականին էր որ մեծ հայ արուեստագէտը Պոլիս այցելեց որ առժամեայ ցուցադրութիւն մը կազմակերպեց ու կայսերական զընահատութեան արժանացաւ :

1897 ին իր ծնեւրովայրին թէ ուղտիոյ մէջ տեղի ունեցաւ իր վաթսունամեայ արուեստագիտական գործունէութեան յորժեանք :

Ամբողջ քաղաքը մասնակցեցաւ հանդէսին . կայսրութեան ամէն կողմերէն շնորհաւորական հեռագիրներ ու նուէրներ անդացին :

*
* *


Քոյց բոլոր այս փառքի շողարձակումներուն մէջ , մեծանուն արուեստագէտը ոգիովը թունդ հայ մը մնացած էր : Ու երբոր Հայաստանի կոտորածները աշխարհքը թնդացուցին , իր աշխատանոցին մէջ Այվազովսքի սարսուաց , վըրձինը սահեցաւ ինկաւ իր մասներէն : Ինք որ ալիքին ամենի բունատեղծութեամբը հեշտորէն կօրօրուէր , արեան ալիքներուն գազափարին առջեւ սարսափահար մընայ . ու , սոսկաց երբոր մտածեց թէ իր հայրենակիցներուն արեանը մէջ լրդացող թագակիր հրէշին կողմէ ընդունած պատուանշանը զեռ կուրծքին վրայ կը կրէր : Երիտասարդի մը աշխուժովը առաւ

մետաղի այդ շողշողուն կտորները , վազեց ծովափի և զգաւանքի կրքոս թափով մը ծովը նետեց այդ պատուանշանները : Յետոյ , զայրոյթի միեւնոյն շարժումէն վարուած , ելաւ դնաց քաղաքին թուրք հիւպատոսին , որուն ըսաւ .


— Արիւնկղակ տիրոջդ ինծի տուած պատուանշանները ծովը նետեցի . աւտարիկ անոնց ժապաւէնները . իրեն զրկէ : Եթէ կուղէ թող ինք ալ իմ պատկերներս ծովը նետէ . բայց հոգս չէ , վասն զի անոնց փոխարժէքը ստացած եմ :

Ու կը մեկնի :

Ե. ՍՐՄԱՔԷՇԻԱՆԼԵԱՆ



Մ Ա Ր Գ Օ Ն



— Սարգօն կը ճանչնա՞ս , Ռէս-Մարգարին աղան : Ա՞ն ինչ եղաւ :

— Էն ալ մեռուցին , աղաս , պատասխանեց մշեցի բեռնակիրը , բարձր ուսերով հուժկու երիտասարդ մը , որ հեռացաւ գնաց հառաչ մը խղրելով կուրծքին սակ :

Այդ շքեղ կազմուածքով հայաստանցիին հետ խօսած պահուս յանկարծ աչքիս առջեւ եկած ցցուած էր Սարգօն , որ , տարիներ առաջ , պատանեկութեանս ասեհը , Պոլիս , մեր տան մէջ ծառայութիւն կընէր : Ան ալ պատանի մըն էր , բայց խոշոր , ոսկրուտ , ամրապինտ պատանի մը՝ չափահասի

մը կազմովը, որ քսանըհինգ տարեկանի երեւոյթը կ'ընծայէր իրեն, մինչ հազիւ տասնութ տարու կար: Հարազատ զուակնէր Մուշի դաշտին, անոր առոյգ արգաւանդութեան կենսալիը պատկերը: Այտերուն կարմիրը գետինը կը կաթէր ու սեւ աչքերուն հրահոսան փայլքը կարծես միշտ բուռն տենդով մը վառւնէր:

Օր մը հայրս բռնած բերած էր զանիկա մեր տունը, գճգճուած տարազովը պանդուխտ հայաստանցիին, ճիտը ծուռ, անխօսուկ համակերպութեամբ մը, որ տարօրինակօրէն կը հակադրուէր իր առիւծի երեւոյթին հետ: Ճնշող, ջախջախող տխրութիւն մը կը մթագնէր այդ հուժկու պատանին, որուն աչքերը արդէն իսկ ունէին երկար սեւեռանքը կեանքի պայքարին զառնութեան: Շուտով իմացանք իր ստիպածը, որ հազարաւոր պանդուխտներու արկածը եղաւ, եւ որ անհատնում կեանքեր հնձեց տարաւ՝ հայրենի օճախին մէջ ամայութիւն տարածելով:

Սարգօն երջանիկ մանկութիւն մը անցուցած էր. հայրը, Ռէս-Մարգար, ազդեցեկ ու սիրուած մարդ մը եղած էր. այն ասին իր քաղաքին մէջ ռէսուլթեան պաշտօնը վարած էր: Եւ սակայն, շատ չանցած՝ խորշակ մը եւ կեր գետին տապալեր էր Ռէս-Մարգարը. հալածանք, բանտ եւ աղքատութիւն: Փոթորիկը մինակ Սարգօին խնայած էր, այդ կիսաւեր տան միակ յոյսն ու ապաւէնը հիմա: Ռէս-Մարգար, ճարհատ, խորհուրդ մը յղացած էր. Պոլիս ղրկել Սարգօն, հոն դրամ վաստակելու եւ ընտանիքին նիւթական անձկութեանը թեթեւ դարման մը բերելու համար: Երկար վա-

րանումներէ յետոյ դիմում բրած էր քահանային, խորհուրդ հարցնելու, վասն զի ղիւրին բան չէր զուակ Պոլիս ղրկելը, ուր շատեր դացած էին, քաջ, առողջ եւ զուարթ ու կա'մ բնաւ չէին գարձած կամ կորաքամակ, հիւանդկախ եւ տխուր: Հապա եթէ Սարգօն ալ... անհնարին աղէտ կըլլար: Քահանան իրաւունք տուած էր այդ ցաւատանջ հօր մտածումներուն, եւ խրատած էր զինք որ եթէ երբեք զաւակը Պոլիս ղրկէ, գոնէ ամուսնացնէ նախապէս:

Ու այսպէս եղած էր. Խաչօհնց Պօզոսին աղջիկը Մարիամ, կայտառ պատանուհի մը, կարգուած էր Սարգօի հետ, որ ամուսնութենէն տասնըհինգ օր յետոյ ստիպուած էր լքել տուն տեղ, հայրենիք, կին, ու Պոլսոյ ճամբան բռնել՝ սպանդանոց առաջնորդուող գառնուկի մը սրտաչարժ հլութեամբը:

Ժիր, արթուն, աշխատասէր տղայ մըն էր. ամէնքս ալ կը սիրէինք զինքը, սէր մը որուն մէջ անշուշտ մեծ դեր կը խաղային անոր երբեմնակի երագուն մեղամաղձութիւնը, ինքնամոռացման ցաւազին վայրկեանները եւ մանաւանդ աչքերէն մաղուող պաղատանքի թափանցանց արտայայտութիւնը: Սիրելէ աւելի կը մեղքնայինք զինքը, վասն զի իր դժբախտ վիճակը սէրէ աւելի արգահատանք կրնար ազդել: Իր հոգիին յարածուն եւ լսիկ տանջանքը տխրութեան հով մը կը պարտացունէր մեր տան մէջ. իր մէկ շարժումէն, մէկ նայուածքէն, գլխի օրօրումէ մը կը կռահէինք իր սիրտը բղքոող լայնափեռեկ վէրքին անհունօրէն տարածուիլը մինչեւ որ բոլորովին թունաւորէր իր մտտաղ-

ու միամտօրէն զգայնիկ էութիւնը: Իրեն մխիթարանք մը պարգեւած ըլլալու մտածումով սկսայ կարգալ գըրել սորվեցնել իրեն. տեսակ մը զեղումով փարեցաւ այդ աշխատութեան, որուն մէջ ան կը տեսնէր իր սիրտը այրող ըղձանքներէն մէկուն յագեցումը. իր ձեռքով նամակ մը գրել իր կարօացած ամուսնին, անոր յայտնել բոլոր մորմոքները իր հոգիին, անսպառ խանդաղատանքը որ իր մէջ օր օրի անդիմադրելի սաստկութիւն մը կստանար: Ուրախութենէն ցատքըտոնեց այն օրը երբ՝ հայրենիքէն ստացած մէկ նամակին ինք իր գրովը կըցաւ պատասխանել. նոր քալելու սկսող տղու մը դանդաղումովը իր մասները թուղթին վրայ գծեցին գրի կոշտ ձեւեր, որոնք սակայն ամենէն անկեղծ արտայայտութիւնը կը խօսէին անխարդախ սիրոյ:

*
* *

Անպարագրելի սփոփանք մը եղաւ այս նամակը, որուն մէջ կարծես իր սիրտն ու արցունքը տեղաւորելով զրկած էր հայրենիք: Բաւական ատեն՝ անոր պարգեւած գինովութեան տակ գրեթէ զուարթ երևեոյթ մը առաւ, ու ա՛լ անկէց ետքը շատ անգամ գեղէն Պոլիս կիջնար հասկնալու թէ պատասխանը եկա՞ծ էր իր նամակին. իր հայրենակիցները ի գուր կը ջանային զինքը համոզել թէ ձմրան եղանակին պատճառաւ թղթատարը կուշանար: Քիչ քիչ ա՛լ սկսաւ չհատալ իրեն յայտնուած պատճառներուն. կարծեց թէ կը խարեն զինքը. ու վիճակը աւելի ողբագին եղաւ: Երեսին վարդ մոյսքը տփղունեցաւ երթալով. պնդակազմ մարմինը իր առաջ-

ուան ուղղաբերձութիւնը չունէր ա՛լ. կը թուլնար եւ կը ճկէր անդուր յարասեւութեամբ մը:

— Ա՛խ հայրենիքս, ա՛խ Մարտ... .

Խենդեցնող յաճախանք մը եղաւ այս մտածումը, որուն ճնշումին տակ կը լկուէր իր անզօր ու անջիղ էութիւնը ինչպէս բարակ շիւղ մը մամուլի ակօաներուն տակ: Ըորեկ ատեն կը մենախօսէր, կ'երազէր, կը զառանցէր:

Դէպք մը, իսկութեանը մէջ որքան ծիծաղաշարժ այնքան եւ աւելի սըրտակեղիք, եկաւ վերջապէս համոզել ծնողքս որ Սարգօն բռնեն հայրենիք գարձնեն:

Խնդճ տղան, օր մը, եղով լեցուն կուժ մը ուսին վրայ, Պոլսէն դարձած պահուն, յանկարծ իր սովորական երազանքներէն մէկուն մէջ կը սուղուի. կը թուի իրեն թէ հայրենիք կը վերադառնայ, ճամկաւոր գեղեցիկ հանդերձանքի մը մէջ խրոխտ կեցուածքով մը, փրփրերախ ձիու մը քամակին վրայ իր նրբակերտ հասակը ցցած. քաղաքին կը մօտնայ, սրտաթունգ, երջանկութենէ արբշիռ, ձին կը մարակէ. եւ անա հեռուանց հայրը, մայրը, կինը կը դիմաւորեն զինքը ու կը հրաւիրեն քաղաք երթալ. բայց ինք եազ կընէ, « Չիէմ ի գար » կըրէ. գործը կերկարի. ինք կը յամուր կը կենայ, իրեն ներկայացուած շաքարը առնելու վարանող տղու մը նազանքովը:

— Չիէմ ի գար:

Ու խօսքին կը միացնէ ուսի մերժողական շարժում մըն ալ, որ կը կրկնուի, կը բազմապատկուի, այն աստիճան որ ուսին վրայ կեցած ե-

ղին կուժը յանկարծ կիջնայ զետին
ու ջարդուփչուր կըլլայ:

Սարգօ, խորտակման աղմուկէն
հիասթափ, յեղակարծօրէն վերստին
ինկած կսկծալի իրահանուժեան մէջ՝
մանաւանդ այդքան շոնգալից կեր-
պով, շանթահար կը մնայ: Անցորդ-
ներ, հէք պանդուխտին աչքերէն թա-
փած արցունքը ւեռնելով, կ'մխի-
թարեն զինքը ու կստիպեն որ ձգէ
երթայ ջարդուած կուժն ու թափած
եղը:

Թուշը կուրծքին, թեւերը երկու
կողմէն յուսահատօրէն վար կախուած,
տուն եկաւ Սարգօն. գլխուն եկած
փորձանքը պատանց ցնորած ապուշի
մը պէս: Հայրս, փոխանակ սրտմտե-
լու, մխիթարեց խեղճ տղան եւ խոս-
տացաւ քիչ օրէն հայրենիք զրկել
զինքը:

Երբեք չպիտի մոռնամ Սարգօին
կերպարանքը այն օրը երբ կապոյտ
երիզաւոր հագուստներուն մէջ իր ա-
ռաջուան զուարթ առուզութիւնը
վերստացած, անսովոր երանութեան
մը մէջ իր դէմքը կարծես փողփողու-
մով մը լուսապսակուած, անիկա ու-
րախութեան արցունք թափելով շո-
ղենաւ նստու վերադառնալու հայրե-
նիք, իր սիրական Մարօին:

Եւ ահա իբր տասնըհինգ տարի ետ-
քը, օտար ափի մը վրայ, պանդուխտ
հայրենակցի մը բերնէն կը լսեմ
յանկաբժ խեղճ Սարգօին մահը, զոր
ան գտած էր այս անգամ ո՛չ Մարօին
կսկիծէն, ոչ հայրենիքի լափող կա-
րօտէն, ոճրագործներու աններող
մահակի՛ն տակ, սւա՛ղ:

Ա.ԶԱՍ

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Կ

Ռուս կառավարութիւնը մտադիր է
եղեր ուսու բօքեր զրկել Փոքր-Ասիա,
միախոնարութիւններ հաստատելու հա-
մար Հայաստանի զանազան կողմերը:
Երկաթուղիներու եւ անետրական
մանաշնորհներէն յետոյ զորս Ռուսիա
ձեռք բերաւ Անատոլուի մէջ, կրօ-
նական գերակշռութիւն մը անշուշտ
յաջողութեամբ պիտի պտակէ Հայաս-
տանի կուլ տալու ուս ծրագիրը:

— Օրմանեան պատրիարք, երեւու-
թապէս իր հրաժարականին վրայ
պնդելով հանգերձ, կը շարունակէ իր
սեպհական տանը մէջ զբաղիլ պատ-
րիարքական գործերով: Աւելի քան
հաւանական է որ հրաժարականը ժա-
մանակի ընթացքին մէջ մոռացու-
թեան մատնուելով՝ Հայր Մաղաքիս
իւ սիրեցեալ աթոռին վրայ հանգ-
չեցնէ գարձեալ իր կոշտուպլոշտ
մարմինը:

Огосовръѣкъ Н. Драруаеѣ

Печатающая «Орбенталъ» — Варна.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ հայ հասարակութեան թէ Երկսեռ Որբախնամ Ընկերութիւնը ապրիլ մէկէն սկսած է իր բաժնեգինները և մասնաւոր նուէրները գտնծել և ընդունիլ:

Ուստի հրապարակաւ կը յայտարարենք և լիտյոյս ենք որ թէ տեղոյս և թէ արտասահմանի ընդհ. հոյութիւնը չպիտի զրանայ իր նիւթական և բարոյական աջակցութիւնը և օգնութիւնը. որովհետեւ սոյն պէտքը արդի ժամանակաւան անհրաժեշտ և վսեմներէն էն կարեւորագոյնն է. այն որբիկներն են որ պիտի կազմեն ապագայ Հոյութեան հաստատուն կուսներ:

Մնանք յարգանք

Ի դիմաց գործադիր ժողովոյ Երկսեռ Որբախնամ Ընկերութեան «Վասպուրականի»

Ատենագպիր Վ. Ատենագետի
Յ. Կ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ ՅՈՎՍԷՓ ԲԱՐՍԱՄԵԱՆ

Հասցէ՝

H. G. DJANGULIAN (*)

(Bulgarie) Varna.

Յ. Գ. — Ընկերութեանս պաշտօնական կնիքը չը կրող ընկալագիրներու վճարուած ստակներուն՝ վարչութիւնը պատասխանատու չէ:

Նոյն

(*) Պէտք է աւելցնել նաեւ ընկերութեան վերաբերիլը:

ՓՈՐԱԳՐԻՉ

ՅԱԿՈՅ ՄՈՍԿՈՑԵԱՆ

Կը պատրաստէ ամէն տեսակ զմուռ եւ լուսանկարէ փորագրութիւն. տօսախի, սակիի, արծաթի, պողպատի եւ ամէն տեսակ մետաղներու վրայ գեղարուեստօրէն կը փորագրէ պատկերներ եւ զարդանկարներ: Դիմել Արեւելեան Տպարան:

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշտութեամբ եւ փութով կը կատարուին:

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ս. Ռ. Ն. Ա.

Երկրորդ թաղ, Շիրազեմսա փողոց, (Սագաչըր լեզմէի կից)

Կը ապագրս ին հայերէն, պուրկարերէն, զաղղիերէն, յուսարէն, աստիկերէն և այլ լեզուներով այցեատման, հասցեատման, հարսանեկան հրատիրագիր, ազգարարութիւն, նամակագրութիւն, պահարան, մահազր, վաճառականական ամէն տեսակ գործեր, գիրք, արագիր, և այլն:

Գունաւոր և սևեզոծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ ստաներ և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆՍՄԲ ԵՒ ՄՍԲՐՈՒԹԻԻՆ
ԳԻՆԵՐԸ ՅՈՅԹ ԳԻՒՐՄԱՏՉԵԼԻ

Ուրիշ փաղափներէ եկած յանձնարարութիւններ նշուրեամբ եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).

